«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2025-2026
Պատմություն (7-րդ դասարան)

Անուն Հայրանուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

1. Ո՞ր թվականին է Հայաստանը երկրորդ անգամ բաժանվել Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: **(0,25)**

ա) 387թ. բ) 428թ. գ) 378թ. դ) 591թ.

2. Ի՞նչ է նշանակում ֆեոդ: **(0,25)**

ա) քաղաք բ) ամրոց գ) հող դ) հարկ

3. Ե՞րբ են Հին Հունաստանում տեղի ունեցել առաջին օլիմպիական խաղերը: **(0,25)**

ա) Ք.ա. 776թ. բ) Ք.ա. 331թ. գ) Ք.ա. 490թ. դ)Ք.ա. 753թ.

4. Ի՞նչ են անվանում «պերգամենտը» հայերեն: **(0,25)** մագաղաթ

5. Ե՞րբ է տեղի ունեցել պարթևա-հռոմեական տասնամյա պատերազմը: **(0,25)**

ա) 52-62թթ. բ) 54-64թթ. գ) 64-74թթ. դ) 62-72թթ.

6. Ո՞ր երկրի վարչական միավորի անունն էր նոմ: **(0,25)**

ա) Ասորեստան բ) Բաբելոն գ) Եգիպտոս դ) Ուրարտու

7. Ի՞նչ է նշանակում ալիքի: **(0,25)**



ա) անհերքելի ապացույց բ) փաստ գ) դեպք

դ) իրավիճակ

8. Ո՞վ է Բեհիսթունյան եռալեզու արձանագրության հեղինակը: **(0,25)**

ա) Դարեհ Երրորդ բ) Դարեհ Առաջին գ) Կյուրոս Մեծ դ) Քսերքսես

9. Ո՞ր քաղաքի մասին է խոսքը, ո՞ր հայոց արքայի օրոք է հռչակվել մայրաքաղաք, և ե՞րբ է հռչակվել մայրաքաղաք: **(1,0)**

- Այն անվանում էին «հազար ու մեկ եկեղեցիների քաղաք»:
- Այդ քաղաքը մայրաքաղաք դարձավ Բագրատունիների օրոք:
- Գտնվում է Ախուրյան գետի ափին:

Անի, Աշոտ Երրորդ Ողորմած, 961թ.

10. Խաչակրաց ո՞ր արշավանքի մասին է խոսքը, ո՞ր քաղաքը պետք է «ազատագրվեր» մուսուլմանների ձեռքից, ե՞րբ է այն տեղի ունեցել: Նշիր նաև բացակա արքայի անունը: **(1,0)**

- Մասնակցում էին երեք արքաներ՝ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Երկրորդը, Անգլիայի թագավոր Ռիչարդ Առաջին Առյուծասիրտը և _____ը:
- Արշավանքը հենց սկզբից անհաջող ընթացք ունեցավ:
- Արշավանքից հետո քրիստոնյաներին թույլատրվեց անարգել այցելել սուրբ վայրեր:

Խաչակրաց երրորդ արշավանք, Երուսաղեմ, 1189թ., Ֆրիդրիխ Առաջին Բարբարոսա

---

11. Ո՞ր պատերազմի մասին է խոսքը, ո՞ր պետությունների միջև է այն ընթացել, ո՞ր թվականներին է այն տեղի ունեցել: Նշիր հայտնի անհատի անուն, ում գործունեությամբ պարտվող կողմը անցավ հակահարձակման և ունեցավ հաջողություններ: **(1,0)**

- Պատերազմը երկարատև էր:
- Հայտնի ճակատամարտերից էր Ազենկուրի ճակատամարտը:
- Կարևոր նշանակություն ունեցավ Օռլեան քաղաքի ազատագրումը:

Հարյուրամյա պատերազմ, ընթացել է Անգլիայի և Ֆրանսիայի միջև, 1337–1453թթ., Ժաննա դ'Արկ

12. Ճանաչիր նկարը. **(2,0)**

ա. Ո՞ր տաճարն է պատկերված նկարում:

բ. Հայաստանում հայտնի ո՞ր տաճարին ես նմանեցնում:

գ. Ո՞ր թագավորության հոգևոր կենտրոնն է եղել:

դ. Ո՞ր աստծուն է նվիրված եղել:

Մուսասիրի տաճար, Գառնու տաճարին, Վանի թագավորությունն (Ուրարտու), նվիրված էր Խալդի աստծուն

13. Ճանաչիր նկարը. **(2,0)**

ա.Ո՞ր քաղաքի խորհրդանիշն է:

բ. Ե՞րբ է այդ քաղաքը հիմնադրվել:

գ. Ո՞վ է եղել առաջին թագավորը:

դ. Ո՞ր գետի ափին է քաղաքը հիմնադրվել:

Հռոմ, Ք.ա. 753թ., Հռոմուլոսը, Տիբրոս գետի ափին

14. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: Կարող ես հարցին պատասխանել նաև շարադրելով: **(2,0)**

«Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների մեջ գարուց պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»:

1. Ո՞վ է սկզբնաղբյուրի հեղինակը:
2. Ո՞ր ժամանակաշրջանին է վերաբերում սկզբնաղբյուրը:
3. Հայաստանը ո՞ր պետության տիրապետության տակ էր գտնվում այդ ընթացքում:
4. Ի՞նչ վարչատարածքային միավորներից էր կազմված այդ պետությունը:

Քսենոփոն, Ք.ա. 5-4դ դարեր, այդ ժամանակ Հայաստանը գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ, սատրապություններ (Հայաստանը կազմում էր 13-րդ սատրապությունը)

15. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: Կարող ես հարցին պատասխանել նաև շարադրելով: **(2,0)**

«Պատմում են, թե կարթագենացի Հաննիբալը հռոմեացիներից Անտիոքոսի կրած վերջնական պարտությունից հետո գնաց հայ ---------- մոտ և հրահանգիչ ու խորհրդատու դարձավ նրան օգտավետ ձեռնարկներում: Բացի դրանից, նկատելով երկրում չօգտագործված և անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծ: Հաննիբալը այնտեղ տարավ ----------ին և ցույց տալով տեղանքը՝ համոզեց նրան այդ վայրում քաղաք հիմնել: [...] Այսպիսով ՝ կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»:

1. Հայոց ո՞ր արքայի մոտ ապաստան գտավ կարթագենցի զորավար Հաննիբալը:
2. Ո՞ր քաղաքի հիմնադրման մասին է սկզբնաղբյուրը:
3. Նաև ի՞նչ անունով է հայտնի այդ քաղաքը:
4. Կարո՞ղ ես ճշել, թե ո՞ր գետի ափին էր նոր քաղաք կառուցելու համար «խիստ հաճելի մի վայր»-ը:

Արտաշես Առաջինի, Արտաշատ քաղաքի, հայտնի նաև հայկական Կարթագեն անունով, Արաքս և Մեծամոր գետերի ջրկիցում

16. Լրացրո՛ւ հայոց արքաների մասին աղյուսակը: **(2,0)**

Արքայի անուն	տիտղոս	կառավարման տարեթվեր	Նշիր երկու կարևոր իրադարձություն, որոնք կապված են տվյալ արքայի հետ
Տրդատ Երրորդ	Մեծ	298-330թթ.	301թ. քրիստոնեության ընդունումն էր որպես պետական կրոն, Գրիգոր Լուսավորչին կարգեց կաթողիկոս, կառուցվեց Էջմիածնի Մայր տաճարը:
Խոսրով Երրորդ	Կոտակ	330-338թթ.	Դվին քաղաքի կառուցումը, ճնշեց կենտրոնախույս նախարարների ելույթները, վերահսկողություն հաստատեց ավագ նախարարների վրա:
Արտաշես Առաջին	Բարեպաշտ	Ք.ա. 189-160թթ.	Հայկական հողերի միավորումը, Արտաշատ քաղաքի հիմնադրումը, ռազմական ռեֆորմը, հողային ռեֆորմը (սահմանաբաժանների տեղադրումը) և այլն:
Տիգրան Երկրորդ	Մեծ	Ք.ա. 95-55թթ.	Մեծ Հայքի ամբողջականության վերականգնումը, Տիգրանակերտ քաղաքի կառուցումը, նվաճողական արշավանքները, Ք.ա 66թ. Արտաշատի պայմանագիրը և այլն:

17. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ ես տեսնում խաչակրաց և մոնղոլական արշավանքների միջև: Գրիր երեք նմանություն և չորս տարբերություն: **(2,0)**

Խաչակրաց արշավանքներ	նմանություններ	Մոնղոլական արշավանքներ
1. Սկսվել են 11-րդ դարում: 2. Արշավանքների մասնակիցները եվրոպացի թագավորների էին, ասպետներ և այլն: 3. Եվրոպական ասպետները շարժվում էին դեպի արևելք՝ Երուսաղեմ: 4. Խաչակիրները կարողացան գրավել Միջերկրական ծովի	ա. Արշավանքները կրում էին նվաճողական բնույթ: բ.Նպաստել են Արևմուտք-Արևելք կապերի ընդլայնմանը: գ. Մեծ աղետներ և մարդկային կորուստներ	1. Սկսվել են 13-րդ դարում: 2.Մոնղոլները բոչվոր անասնապահ ցեղեր էին: 3. Մոնղոլ բոչվորները գրավեցին մի շարք երկրներ և շարժվում էին դեպի արևմուտք: 4. Մոնղոլները ստեղծեցին «Եվրասիական» հսկայածավալ մի կայսրություն, որի սահմանները

արևելյան ափի՝ Սիրիայի և Պաղեստինի ծովամերձ մարզերը: 5. Գրված տարածքներում խաչակիրները ստեղծեցին պետություններ, օրինակ՝ Երուսաղեմի թագավորությունը	պատճառեցին նվաճված ժողովուրդներին:	տարածվում էին Խաղաղ օվկիանոսից մինչև Դանուբի գետաբերան: 5. Կայսրությունը բաժանված էր 5 ուլուսների:

18. Ինչպե՞ս դասավորվեց հայ ժողովրդի ճակատագիրը Արշակունյաց դինաստիայի անկումից հետո: Ի՞նչ միջոցներ էին կիրառում Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի տիրակալները հայերին հնազանդության մեջ պահելու համար: Բե՛ր փաստեր, շեշտադրի՛ առանցքային իրադարձություններ (ապստամբություններ, անհատներ, պայմանագրեր, ժողովներ, օրենքներ և այլն) : **(3,0)**

428թ. Արշակունյաց դինաստիայի կործանումից հետո Հայաստանի արևելյան հատվածը գտնվում էր Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ, իսկ արևմտյան հատվածը՝ Բյուզանդիայի տիրապետության տակ:

Արևելյան Հայաստանը վերածվեց Սասանյան պետության վարչական միավորի՝ մարզպանության: Հաջորդ երկու դարերի ընթացքում պարսկական Հայաստանը կառավարում էին մարզպանները: Երկրի կարևորագույն պաշտոնները (հազարապետություն, սպարապետություն և այլն) թողնվել էին նախարարներին: Պարսից Հազկերտ II-ի օրոք վերջ դրվեց քրիստոնյաների նկատմամբ մինչ այդ եղած հարաբերական հանդուրժողականությանը, 449 թ. հատուկ հրովարտակով հայերից պահանջում էր անհապաղ զրադաշտականություն ընդունել: Հայ ժողովուրդը ապստամբական դրոշ է բարձրացնում Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, որը հայտնի էր Վարդանանց պատերազմ անունով: Հայտնի ճակատամարտերց էր 451թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտը: Հակապարսկական հայտնի ապստամբություններից էր նաև Վահանանց պատերազմը 481-484թթ-ին:

Հայաստանի արևմտյան մասում ՝ Բյուզանդական Հայաստանում, 387 թվականի բաժանումից հետո իրավիճակը փոքր-ինչ այլ էր: Բյուզանդիան աստիճանաբար սկսեց վերացնել հայոց քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը: Հուստինիանոս I-ի (527-565) օրոք բյուզանդական Հայաստանի վարչական շրջանի վերածնման արդյունքում ստեղծվեցին չորս վարչական միավորներ՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք նահանգները: Վերացվեցին հայ նախարարների ինքնավարությունը, արտոնություններն ու սեփական զորք ունենալու ժառանգական իրավունքը: Համաձայն բյուզանդական օրենքի՝ ժառանգությունը պետք է բաժանվեր թե՛ արական, թե՛ իգական սեռի երեխաների միջև: Հակաբյուզանդական հայտնի ապստամբություններից էր նաև 539 թ. ապստամբությունը Հովհաննես Արշակունու գլխավորությամբ:

Սևագրություն